

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՁԵՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

15 Նոյեմբեր, 2019-ին, յետ երեկոյեան ժամերգութեան, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի ձեռամբ կատարուեցաւ սարկաւազական կոչման արարողութիւնը, Սուրբ Յարութեան Տաճարի ուրարակիրներէն՝ Տրց. Արտա Տիւշէնի: Ընծայեալը ծնրադիր յառաջացաւ Դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացաւ կիսասարկաւազութեան աստիճան: Արարողութեան խարտաւիլակն էր Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեան:

Շաբաթ, 16 Նոյեմբեր, 2019-ին, Տրց. Արտա Տիւշէն, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի՝ Ս. Գլխադրի մատրան առջեւ սարկաւազական ձեռնադրութեան շնորհին արժանացաւ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ: Հոգեշնորհ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեան եւ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեան ընծայեալը առաջնորդեցին ձեռնադրիչ Սրբազան Հօր: Յընթացս Գլխադրի մատուցուած Սուրբ Պատարագի, Լուսարարապետ Սրբազան Հայրը Կիսասարկաւազ՝ Տրց. Արտա Տիւշէնը ձեռնադրեց Սարկաւազ:

Նոյն օրը երեկոյեան, յետ Կիրակնամուտքի ժամերգութեան, կատարուեցաւ քահանայական կոչման կարգ, Սուրբ Աթոռոյս սարկաւազներէն՝ Արմէն Սարուխանեանի, Ռաֆիկ Ղազարեանի, Արտա Տիւշէնի եւ Նարեկ Աբրահամեանի: Ընծայեալները, խարտաւիլակութեամբ՝ Լուսարարապետ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի եւ առընթերակայութեամբ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեանի եւ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեանի, ծնրագնաց յառաջացան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի կեդրոնական դուռէն դէպի Աւագ Խորանի ատեանը, ուր բազմած էր ձեռնադրիչ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ընծայեալները Սրբազան Պատրիարքի հարցումներուն պատասխանելով նզովեցին «չար աղանդներու հերձուածողները» եւ յայտարարեցին «աշակերտիլ եւ հետեւիլ» Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան Սրբազան Հայրապետներուն, ապա միասնաբար արտասանեցին Հաւատոյ Հանգանակը Հայաստանեայց Եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան:

Կիրակի, 17 Նոյեմբեր, 2019-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ չորս Սարկաւազներ ձեռնադրուեցան քահանայ:

Ձեռնադրութեան խորհուրդը կատարուեցաւ տպաւորիչ հանդիսաւորութեամբ: «Այսօր աստուածութիւնն զուարճանայ» շարականով սկսաւ առաջին մասը ձեռնադրութեան խորհուրդին: Ապա «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականի ելեւէջներուն ընդմէջէն, ի նշան աշխարհէ հրաժարման, ընծայեալները ձեռամբարձ ժողովուրդին դարձան, ապա ձեռնադրութեան երկրորդ բաժնին մէջ ձեռնադրիչ Պատրիարք Սրբազանէն ընդունեցին քահանայական զգեստաւորման օրհնութիւնը, որմէ ետք անցան Աւագ Խորանի ետին: «Խորհուրդ խորին» երգուած ատեն, երբ բացուեցաւ վարագոյրը՝

չորսն ալ զգեստաւորուած կանգնած էին սեղանին ձախակողմը՝ պատրաստ ընդունելու քահանայութեան Ս. Օծումը: Լուսարարապետ Սրբազան Հայրը, Սրբալոյս Միւռնի աղանին բերաւ Ս. Սեղան, եւ Պատրիարք Սրբազանը «Առաքելոյ աղանոյ» շարականը երգելով կը հեղու Ս. Միւռնը ոսկեայ ընդունարանի մը մէջ: Օծման խորհրդաւոր ու նուիրական պահուն, Ձեռնադրիչ Պատրիարք Սրբազան Հայրը, Արմէն Սարկաւագ Սարուխանեանը՝ կոչեց «Տէր Արքակ Աբեղայ», Ռաֆիկ Սարկաւագ Ղազարեանը՝ կոչեց «Տէր Արշակ Աբեղայ», Արտա Սարկաւագ Տիւշէնը՝ կոչեց «Տէր Արտակ Աբեղայ» իսկ Նարեկ Սարկաւագ Աբրահամեանը՝ կոչեց «Տէր Արտէն Քահանայ»: Ապա ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն մատուցանելու Ս. Պատարագ, իրենց անդրանիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին:

Պատրիարք Սրբազան Հայրը իր յորդորական խօսքին մէջ ըսաւ. «Ուրախութեան եւ Ուխտի օր է այսօր, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ մեր ժողովուրդին համար»: Եւ յորդորեց նորընծաներուն յաճախ անդրադառնալ իրենց ուխտառութեան այս օրուան, մնալով միշտ «մշակ առանց ամօթոյ»:

«Ողջոյն»-ի պահուն, Պատրիարք Սրբազան Հայրն ու միաբանակից եղբայրները մօտեցան ի համբոյր նորընծաներուն նորաօծ ճակտին եւ աչին: Ս. Պատարագի աւարտին, եկեղեցւոյ դասին մէջ, մինչ նորընծաները գրակալներու վրայ զետեղուած Աւետարաններու ընթերցումը կը կատարէին դպիրներ եւ ժողովուրդը մօտեցան աջահամբոյրի:

- Կէսօրէ ետք, Ժամերգութեան աւարտին, նորաօծ ընծայեալները Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ ստացան կուսակրօն քահանայի վեղարի օրհնութիւնը: Ապա իրենց խարտաւիլակ Սրբազանի, առընթերակայ հայր սուրբերու եւ ուսուցիչ հայր սուրբի հետ բարձրացան Պատրիարքարան եւ ստացան Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Իրիկնադէմին, Պարտիզաթաղի վարդապետաց ճաշարանին մէջ, միաբանութեան եւ նորընծաներու հարազատներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք, որու ընթացքին եղան բարի մաղթանքի խօսքեր: Նորընծաները իրենց «Քառասունքի» ապաշխարութեան եւ պատրաստութեան շրջանը պիտի անցընեն Բեթղէհէմի Ս. Ծննդեան Տաճարին կից՝ Հայոց Վանքին մէջ, ուսանելով Ս. Պատարագի կարգերը: Այս շրջանի իրենց ուսուցիչն է Բեթղէհէմի Ս. Ծննդեան Տաճարի Տեսուչ՝ Տ. Ասպետ Վարդապետ Պալեան:

